

այնքան հաւատարիմ, այնքան դաժանօրէն իրական, գրիչը ոչ մէկ *couleur locale*¹³ չը փախցնիր: Անոնք որ գաւառացի են եւ ապրած այդ միջավայրը՝ անոնք միայն կը զգան թէ Զարդարեան որքան դիտող եղած է իր մանրամասնութեանց մէջ: Իբր բանաստեղծ նկարագրութիւններու մէջ կը թուի թէ պարզութեան դէմ կը մեղանչէ, բայց այդ պէտք է վերագրել մանրամասնութեանց, որոնք սակայն այնքան իրական են եւ կը ստիպուիս չտեսնում ընել այդ կէտը:

Բայց երբ Զարդարեան մեզի կուտայ ինքնուրոյն քերթուածները, հոն աւելի պոլսեցի գրող մըն է, թէեւ կը զգաս որ գաւառական միջավայրի մէջ գրուած են անոնք: Իր ոճը գաւառի կեանքով լեցուն, վայրի ծաղիկներու մէջ մեծցած գեղեցիկ աղջիկ մըն է, որուն կը պակսի քաղաքի մթնոլորտի հպումը աւելի ճկուելու եւ նրբագծուելու համար: Զարդարեանի ներկայ ոճը աւելի ամփոփ, աւելի ճկուն եւ աւելի սահուն է: Գիտէ վարպետօրէն գործածել ժողովրդական դարձուածքները, բայց դժբախտաբար ո՛չ յաճախ: